

ՀԱՋԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ.....	2
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ, ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ...	2
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	4
ԾՐԱԳՐԵՐԻ ԶՆՆՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶՂԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՄՆԻՑ.....	4
ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՎ ԿԱՐԾԻՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ.....	7
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ.....	8
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....	9

Հավելված Ա. Սահմանումներ

Հավելված Բ. Թիվ 12114 Գործադիր հրամանի իրականացման ընթացակարգ

Հավելված Գ. Խնդրահարույց ոլորտների և վայրերի նկարագրական ցանկ

*Հավելված Դ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվետվություններ*

ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան («ՀՄԿ») ըմբռնում է, որ կայուն տնտեսական աճի և առողջ շրջակա միջավայրի ապահովման խնդիրները փոխկապակցված են: Սույն ուղեցույցի նպատակը էկոլոգիական և սոցիալական ազդեցության¹ գնահատման գործընթացի սահմանումն է, որպեսզի ընտրված երկրների հետ կնքված Հազարամյակի մարտահրավերի համաձայնագրերի («Համաձայնագրեր») ներքո ֆինանսավորվող ծրագրերը լինեն էկոլոգիապես ապահով, համապատասխանեն ՀՄԿ-ի ստեղծումն ամրագրող, ինչպես նաև կիրառելի տեղական օրենսդրության պահանջներին, շրջակա միջավայրին, մարդու առողջությանն ու ապահովությանը² զգալի վնաս չպատճառեն:

ՀՄԿ-ն ընդունում է այնպիսի ծրագրային նախագիծ, որն արտացոլում է տվյալ երկրում հանրային մասնակցության արդյունքները ծրագրի բոլոր փուլերում՝ համակցելով կառավարության շահերը մասնավոր բիզնեսի և քաղաքացիական հասարակության շահերին: Այս սկզբունքներից ելնելով՝ ՀՄԿ-ն կաշխատի ապահովել, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նախապատրաստական աշխատանքները ներառեն քննարկումներ ազդեցության ենթակա կողմերի հետ և ապահովեն համապատասխան փաստաթղթերի թափանցիկությունը հանրության համար:

Եվ վերջապես, ՀՄԿ-ն առաջնորդվում է այն սկզբունքով, որ Համաձայնագրի իրականացման, այդ թվում էկոլոգիական և սոցիալական բացասական ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների պատասխանատվությունը կրում է տվյալ երկիրը: Ակնկալվում է, որ Համաձայնագրի ներքո իրականացվող ծրագիրը կհամապատասխանի տվյալ երկրի օրենսդրությանը, կանոնակարգերին և ստանդարտներին, ինչպես նաև միջազգային համաձայնագրերով երկրի ստանձնած պարտավորություններին:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՂՔՈՒՐՆԵՐԸ, ՈւՂԵՑՈՒՅՑԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Սույն Ուղեցույցում արտացոլված քաղաքականությունները հիմնվում են կայուն զարգացման ծրագրերի նախագծման սկզբունքների և այս ոլորտում միջազգային լավագույն փորձառության վրա՝ ներառյալ Ազդեցության գնահատման միջազգային ընկերակցության մշակած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման

¹ «Էկոլոգիական և սոցիալական ազդեցություն» հասկացությունը ենթադրում է շրջակա բնական միջավայրի և տվյալ միջավայրում բնակվող մարդկանց վրա որևէ ծրագրի ունեցած ազդեցությունը և ներառում է մշակութային ժառանգության, բնիկների, ոչ կամավոր վերաբնակեցման, ինչպես նաև մարդու առողջության և ապահովության վրա եղած ազդեցությունը: Այն կարող է ներառել նաև նկատելի խթանվող, անուղղակի և գումարային ազդեցությունը և իրատեսորեն կանխատեսելի հետևանքները, որոնք կարող են կապված լինել ծրագրի հետ կամ բխել վերջինից:

² Հավելված Ա-ն ներկայացնում է սույն Ուղեցույցում գործածվող բառերի և հասկացությունների սահմանումները:

լավագույն օրինակների սկզբունքները», Միացյալ Նահանգների կառավարության զարգացմանն օժանդակող և ֆինանսավորող այլ կազմակերպությունների բնապահպանական քաղաքականությունները և ուղեցույցները, զարգացման բազմակողմանի բանկերի՝ շրջակա միջավայրին առնչվող քաղաքականությունները և ուղեցույցները, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) միջոցով արտահանման վարկային կազմակերպությունների կողմից մշակված «Ընդհանուր մոտեցումները» և միջազգային առևտրային բանկերի կողմից կիրառվող Էկվատորի սկզբունքները: Ի լրումն, սույն Ուղեցույցն արտացոլում է հետևյալը.

- ✓ 2003 թ. Հազարամյակի մարտահրավերի ակտի 605-րդ բաժնի (ե) կետի (3) ենթակետի համաձայն, ՀՄԿ-ն իրավունք չունի օժանդակել որևէ ծրագրի, որը «կարող է զգալի վնաս հասցնել շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովությանը»: Հետևաբար, ՀՄԿ-ն չի ֆինանսավորի (կամ շարունակի ֆինանսավորել) նման ծրագիրը, եթե վերջինս ներառվի երկրի ներկայացրած առաջարկում: (Տես՝ «շրջակա միջավայրի, մարդու առողջության և ապահովության վրա գործող ազդեցության» քննարկումը Հավելված Ա-ում:)
- ✓ 1979 թ. հունվարի 4-ի թիվ 12114 Գործադիր հրամանի (թիվ 1957 Ֆեդերալ կանոն, 1979 թ. հունվարի 9) համաձայն, յուրաքանչյուր ֆեդերալ մարմին պետք է ընթացակարգ սահմանի ֆեդերալ մակարդակով իրականացվող այն խոշոր միջոցառումների համար, որոնք զգալի ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա Միացյալ Նահանգների աշխարհագրական սահմաններից դուրս և ներսում: Ակնկալվում է, որ Գործադիր հրամանը սահմանափակ կիրառություն կունենա ՀՄԿ-ի ծրագրերի համար, սակայն բոլոր այն դեպքերում, երբ գործում են Գործադիր հրամանի պայմանները, կկիրառվեն Հավելված Բ-ում նկարագրվող ընթացակարգերը:
- ✓ Այն դեպքերում, երբ ՀՄԿ-ի գործողությունները կամ Համաձայնագրի ներքո իրականացվող կամ ֆինանսավորվող ծրագիրը կարող է զգալիորեն ազդել Միացյալ Նահանգների այդ թվում վերջինիս պատկանող տարածքների շրջակա միջավայրի որակի վրա, ՀՄԿ-ն կպահանջի, որ սույն Ուղեցույցի փոխարեն կիրառվեն Շրջակա միջավայրի ազգային քաղաքականության ակտի (40 CFR Part 1500) համաձայն Շրջակա միջավայրի որակի խորհրդի սահմանած շրջակա միջավայրի գնահատման ընթացակարգերը:

Սույն Ուղեցույցի առաջնային խնդիրն է նկարագրել շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման այն սկզբունքները, որոնք Համաձայնագիր կնքելու հավակնորդ երկրները պետք է կիրառեն Համաձայնագրի շրջանակներում: Սույն Ուղեցույցը նպատակ չունի նկարագրել ՀՄԿ-ի իրականացման ներքին

ընթացակարգերը, որոնք ՀՄԿ-ն կմշակի՝ ելնելով սույն Ուղեցույցի կիրառման փորձից:

Ժամանակ առ ժամանակ ՀՄԿ-ն կվերանայի Ուղեցույցը, վերջինիս կիրառման ընթացքում քաղված դասերը, ինչպես նաև միջազգային ստանդարտների և պրակտիկայի նորմերի համապատասխան փոփոխություններն արտացոլելու համար: Բացի այդ, ծրագրի իրականացման ընթացքում ՀՄԿ-ն կարող է երկրին այնպիսի լրացուցիչ ուղղորդում տրամադրել, որը հնարավոր է նպատակահարմար լինի տվյալ երկրի նորմերի և միջազգային ստանդարտների համատեքստում, ինչպես օրինակ՝ Համաշխարհային բանկի «Աղտոտման կանխարգելման և վերացման ձեռնարկը» (1998 թ., կամ հետագա վերանայված տարբերակները) կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ստանդարտները և ուղեցույցները:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սույն Ուղեցույցը վերաբերում է գործող կամ առաջարկվող Համաձայնագրում նկարագրված յուրաքանչյուր ծրագրի (այսուհետ՝ առանձին վերցված «Ծրագիր» կամ միասին վերցված «Ծրագրեր») գնահատմանը: Առանձին ծրագրերի նկատմամբ սույն Ուղեցույցի կիրառելիությունը և էկոլոգիական ու սոցիալական ազդեցության գնահատման ծավալը, խորությունը և տեսակը կախված կլինի առաջարկվող ծրագրերի բնույթից, մասշտաբներից և էկոլոգիական ու սոցիալական հնարավոր ազդեցության աստիճանից:

ՀՄԿ-ի Շրջակա միջավայրի գնահատման գործընթացը պետք է հաշվի առնի տվյալ երկրի առանձնահատկությունները, տվյալ երկրում կատարված շրջակա միջավայրի հետազոտությունների արդյունքները, Շրջակա միջավայրի պահպանության ազգային ծրագրերը, երկրի ընդհանուր քաղաքականության հայեցակարգը և օրենսդրությունը, ծրագիրն իրականացնող և վերջինիս էկոլոգիական ու սոցիալական հետևանքները կառավարող կազմակերպությունների կարողությունները, ինչպես նաև համապատասխան միջազգային համաձայնագրերի ներքո երկրի ստանձնած պարտավորությունները:

ԾՐԱԳՐԵՐԻ ԶՆՆՈՒՄԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Համաձայնագրի ներքո ներկայացվող առաջարկի ուսումնասիրման գործընթացի հնարավորինս վաղ փուլում ՀՄԿ-ն կկատարի յուրաքանչյուր ծրագրի զննում՝ սույն ուղեցույցի համաձայն: Համաձայնագրի ներքո ներկայացվող առաջարկի ուսումնասիրման արդյունքում ՀՄԿ-ն ֆինանսավորման վերաբերյալ որոշումներ կկայցնի՝ հաշվի առնելով նաև զննման և, անհրաժեշտության դեպքում, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կամ էկոլոգիական ու սոցիալական ազդեցության այլ վերլուծությունների արդյունքները: Արդյունքում ՀՄԿ-

ն կֆինանսավորի ծրագիրը միայն այն դեպքում, երբ առաջարկում նախատեսվի բոլոր պահանջներին համապատասխան գնում և էկոլոգիական ու սոցիալական ազդեցության վերլուծություն:

Էկոլոգիական և սոցիալական ազդեցության վերլուծության պահանջի կատարման համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատասխանատու է Համաձայնագրի կողմ հանդիսացող երկիրը, սակայն ՀՄԿ-ն վերջինիս կտեղեկացնի և խորհուրդներ կտա Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) պահանջների մասին: ՀՄԿ-ն կծանոթանա Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքներին և առաջարկություններին՝ սույն Ուղեցույցի հետ վերջիններիս համապատասխանությունն ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում

ՀՄԿ-ն կարող է պահանջել գնահատման լրացուցիչ աշխատանքներ, այդ թվում հանրային քննարկումներ և տեղեկատվության հրապարակում (տես ստորև):

Անվերապահ արգելք: Ինչպես արդեն նշվել է, ՀՄԿ-ն չի կարող աջակցել այն ծրագրերին, որոնք «հավանական է զգալի վնաս հասցնեն շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովությանը»: Հետևաբար, էկոլոգիական ազդեցության տեսանկյունից նախագծերը գնելիս՝ ՀՄԿ-ն կառանձնացնի նման ծրագրերը և վերջիններիս կզրկի ֆինանսավորումից՝ Հավելված Ա-ում տրվող սահմանման հիման վրա: Նման ծրագիրը կդասակարգվի որպես «անվերապահ արգելք»:

Ծրագրի կարգի որոշումը: ՀՄԿ-ն կգննի բոլոր Համաձայնագրի առաջարկները՝ բացահայտելու համար այն ծրագրերը, որոնք լրացուցիչ ուսումնասիրություն են պահանջում իրենց էկոլոգիական և սոցիալական հնարավոր բացասական ազդեցության պատճառով: Կբացահայտվեն նաև այն ծրագրերը, որոնք իրականացվելու են խնդրահարույց ոլորտներում կամ խնդրահարույց վայրերի մոտ: Ջննման գործընթացի արդյունքը կհանդիսանա ծրագրերի բնապահպանական դասակարգումը, որը կհիմնվի OECD-ի «Ընդհանուր մոտեցումներ»-ում ներկայացվող առաջարկությունների և Համաշխարհային բանկի պրակտիկաների վրա: Դասակարգումը կկատարվի՝ հաշվի առնելով էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունը, ինչպես նաև պահանջվող էկոլոգիական հետազոտության ծավալները:

«Ա» կարգ: Ծրագիրը դասակարգվում է որպես «Ա» կարգի ծրագիր այն դեպքում, երբ վերջինիս խնդրահարույց, բազմաբնույթ կամ անկանխատեսելի էկոլոգիական և սոցիալական նկատելի բացասական ազդեցություն գործելու հավանականությունը մեծ է: Նման ազդեցությունը կարող է ընդգրկել ավելի լայն տարածք, քան այն վայրերը կամ շինությունները, որոնք նախատեսված են ֆիզիկական աշխատանքների համար: Սկզբունքորեն «Ա» կարգը ներառում է այն ծրագրերը, որոնք նախատեսված են խնդրահարույց ոլորտներում կամ վայրերում և

(կամ) նման վայրերից ոչ հեռու: Հավելված Գ-ում բերվում է խնդրահարույց ոլորտների և վայրերի օրինակելի ցանկը:

«Ա» կարգի ծրագրերի դեպքում ՀՄԿ-ն սույն Ուղեցույցի համաձայն էկոլոգիական ազդեցության գնահատում է պահանջում: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) դիտարկում է կոնկրետ ծրագրի բնապահպանական և սոցիալական հնարավոր ռիսկերն ու հետևանքները ծրագրի ազդեցության գոտում: Ուսումնասիրվում են ծրագրի այլընտրանքները, այդ թվում ծրագրի ընտրության, տեղակայման, ծրագրման, նախագծման և իրականացման եղանակների բարելավման հնարավորությունները՝ էկոլոգիական և սոցիալական բացասական հետևանքները կանխելու, նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու, իսկ դրական հետևանքներն էլ ավելի ամրապնդելու նպատակով: ՇՄԱԳ-ը ներառում է Շրջակա միջավայրի կառավարման պլան, որը սահմանում է ծրագրի իրականացման ընթացքում բացասական էկոլոգիական և սոցիալական հետևանքները մեղմացնելու և կառավարելու գործընթացը: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության առաջարկվող բովանդակությունը ներկայացվում է Հավելված Դ-ում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը անհրաժեշտ է նախաձեռնել ծրագրի մշակման հնարավորինս վաղ փուլում: ՇՄԱԳ-ը պետք է սերտորեն առնչվի առաջարկվող ծրագրի տնտեսական, ֆինանսական, ինստիտուցիոնալ, սոցիալական և տեխնիկական վերլուծությունների հետ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պետք է անդրադարձնա բնական միջավայրին (օդ, ջուր և հող), մարդու առողջությանը և ապահովությանը, սոցիալական խնդիրներին (ոչ կամավոր վերաբնակեցում, տեղաբնիկներ և մշակութային ժառանգություն), բնական աղետների ռիսկին և խոցելիության գնահատմանը, ինչպես նաև անդրսահմանային և գլոբալ էկոլոգիական հարցերին:

«Ա» կարգի ծրագրի մասնակի կամ լրիվ ֆինանսավորումը ՀՄԿ-ի կողմից պայմանավորված կլինի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ավարտով: Նախքան ՇՄԱԳ-ի ավարտը որոշ ֆինանսավորում հատկացնելու մասին որոշում կայացնելիս՝ ՀՄԿ-ն կարող է դիտարկել ՇՄԱԳ-ի իրականացման, ինչպես նաև ծրագրի այնպիսի տարրերի հետ կապված ծախսերի ֆինանսավորման հարցը, որոնք կարող են շրջահայացորեն նախաձեռնվել նախքան գնահատման ավարտը (օր.՝ ծրագրի նախնական վարչարարություն: ՇՄԱԳ-ն իրականացնելու անհնարինության դեպքում ՀՄԿ-ն ընթացակարգ կսահմանի՝ տվյալ Համաձայնագրի առանձնահատկությունների հիման վրա խնդիրը լուծելու համար: Ամեն դեպքում, սույն Ուղեցույցի այլ պահանջները շարունակում են տարածվել ծրագրի վրա:

«Բ» կարգ: Ծրագիրը դասակարգվում է որպես «Բ» կարգի ծրագիր այն դեպքում, երբ վերջինիս բացասական էկոլոգիական և սոցիալական հնարավոր ազդեցությունն ավելի փոքր է, քան «Ա» կարգի ծրագրերի դեպքում: Սովորաբար, նման ազդեցությունը կրում է տեղային բնույթ, և բացասական հետևանքները, եթե այդպիսիք առկա են, գրեթե միշտ կանխելի են, իսկ մեղմացնող միջոցառումներն ավելի մատչելի:

«Բ» կարգի ծրագրի դեպքում ՀՄԿ-ն կպահանջի էկոլոգիական և սոցիալական ազդեցության որոշակի վերլուծություններ և, անհրաժեշտության դեպքում, Շրջակա միջավայրի կառավարման պլաններ: Նման վերլուծությունները կարող են ՀՄԿ-ի կողմից տվյալ ծրագրի մասնակի կամ ամբողջական ֆինանսավորման պայման հանդիսանալ: Վերլուծության ծավալն ու ձևը պայմանավորված կլինի կոնկրետ ծրագրով և վերջինիս հնարավոր էկոլոգիական ու սոցիալական ազդեցությամբ: Ինչպես «Ա» կարգի ծրագրի համար կատարվող Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դեպքում, «Բ» կարգի ծրագրի վերլուծությունը ևս պետք է դիտարկի ծրագրի էկոլոգիական և սոցիալական հնարավոր դրական ու բացասական հետևանքները, և առաջարկություններ ներկայացնի այն բոլոր միջոցառումների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են բացասական հետևանքները կանխելու, նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու, ինչպես նաև դրական հետևանքներն էլ ավելի ամրապնդելու համար: Ընդհանուր առմամբ նման աշխատանքների շրջանակներն «Ա» կարգի ծրագրերի համեմատ նեղ են:

«Գ» կարգ: Ծրագիրը դասակարգվում է որպես «Գ» կարգի ծրագիր, եթե վերջինիս բացասական էկոլոգիական և սոցիալական ազդեցությունն անհավանական է:

Սովորաբար ՀՄԿ-ն չի պահանջում էկոլոգիական և սոցիալական ազդեցության վերլուծություն «Գ» կարգի ծրագրերի համար, սակայն ՀՄԿ-ն իրավունք է վերապահում պահանջել էկոլոգիական և սոցիալական որոշ հետազոտություններ, հաշվետվություններ, կամ ուսուցում, եթե այն անհրաժեշտ է, կամ եթե հնարավոր է էլ ավելի ամրապնդել էկոլոգիական և սոցիալական դրական ազդեցությունը:

«Դ» կարգ: Առաջարկվող ծրագիրը դասակարգվում է որպես «Դ» կարգի ծրագիր, եթե նախատեսվում է, որ ՀՄԿ-ի ֆինանսավորումը կստանա որևէ միջանկյալ օղակ (օր.՝ քաղաքային դրամաշնորհների հիմնադրամ), որն իր հերթին միջոցները կտրամադրի այնպիսի ենթածրագրերի, որոնք կարող են հանգեցնել բացասական էկոլոգիական և սոցիալական հետևանքների:

Համաձայնագրի կողմ հանդիսացող երկիրը պետք է պահանջի, որ «Դ» կարգի ծրագրի ենթածրագրերն առնվազն համապատասխանեն էկոլոգիական և սոցիալական վերլուծության ստանդարտներին, ինչպես նաև տվյալ երկրի համապատասխան օրենքներին և կանոնակարգերին: ՀՄԿ-ն իրեն իրավունք է վերապահում առանձին դեպքերում սահմանել շրջակա միջավայրին առնչվող կատարողականի լրացուցիչ ստանդարտներ և մոնիտորինգի պահանջներ ենթածրագրերի համար՝ պայմանավորված ֆինանսավորման միջանկյալ օղակի բնույթով: Միջանկյալ օղակը կապահովի, որ բոլոր ենթածրագրերի էկոլոգիական և սոցիալական ազդեցության վերլուծություններն ու վերջիններիս առնչվող փաստաթղթերը մշակվեն հանրային քննարկումներով և հասանելի լինեն ազդեցության ենթակա բոլոր հնարավոր կողմերի համար:

Համաձայնագրի կողմ հանդիսացող երկիրը պետք է պահանջի, որ ֆինանսավորման միջանկյալ օղակը բնապահպանական մասով իր ենթածրագրերի մոնիտորինգ իրականացնի և ՀՄԿ-ին պարբերական (սովորաբար՝ տարեկան) հաշվետվություններ ներկայացնի իր բնապահպանական համապատասխան ընթացակարգերի և կատարողականի վերաբերյալ:

Վերոնշյալ սահմանումներից բացի, էկոլոգիական ազդեցության առումով ծրագրերը զննելիս ՀՄԿ-ըն կորոշի, արդյոք սույն Ուղեցույցի Հավելված Բ-ն («Շրջակա միջավայրի ազգային քաղաքականության մասին» ակտը) կամ որևէ այլ պահանջներ կամ ընթացակարգեր առաջարկվող ծրագրի համար կիրառելի են թե՛ ոչ:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԾԻՔԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

Քանի որ ՀՄԿ սկզբունքների համաձայն Համաձայնագրով իրականացվող ծրագրի նկատմամբ պատասխանատվությունը կրում է ծրագիրն իրականացնող երկիրը, ակնկալվում է, որ իրականացնող կազմակերպությունները Շրջակա միջավայրի վրա ազդեցության իրենց կատարած գնահատումներում, վերլուծություններում և Շրջակա միջավայրի կառավարման պլաններում կարտացոլեն հանրային ակտիվ մասնակցությամբ և ժամանակին տեղի ունեցած քննարկումների արդյունքները: Ակնկալվում է նաև, որ նշված փաստաթղթերը մատչելի և հասանելի կլինեն հանրության համար:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ՀՄԿ-ն կարող է քննարկման դնել ծրագրի համար նախատեսվող ֆինանսավորման մասնակի կամ ամբողջական հատկացումը՝ համոզվելու համար, որ Համաձայնագրի և հարակից փաստաթղթերի ներքո իրականացվող ծրագրերը հետևում են էկոլոգիական և սոցիալական բացասական ազդեցության մեղմացմանն ուղղված միջոցառումների կատարմանը: Համաձայնագիրը և հարակից փաստաթղթերը կամրագրեն այն եղանակները, որոնցով ծրագիրը պետք է հետևի էկոլոգիական և սոցիալական բացասական ազդեցության մեղմացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Համաձայնագրի կողմ հանդիսացող երկիրը Համաձայնագրի իրականացման ողջ ժամանակահատվածում պատասխանատու է ազդեցության մեղմացման ծրագրի (օր.՝ Շրջակա միջավայրի կառավարման պլան) պատշաճ մոնիտորինգի համար: Հաշվի առնելով, որ Համաձայնագրի չափանիշներին համապատասխանող ոչ բոլոր երկրները կունենան նման կարողություն, ՀՄԿ-ն կարող է, անհրաժեշտության դեպքում, Համաձայնագրի ներքո ֆինանսական միջոցներ տրամադրել՝ օժանդակելու համար մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացմանն ու դրանց նկատմամբ հսկողությանը: Այցելությունների և իրականացնող կազմակերպության տրամադրած տեղեկատվության ուսումնասիրության միջոցով ՀՄԿ-ն կհետևի, որ ծրագրով նախատեսված մեղմացնող միջոցառումներն իսկապես իրականացվեն:

Բացի այդ, անհրաժեշտության դեպքում ՀՄԿ-ն կարող է էկոլոգիական աուդիտի իրականացում պահանջել՝ ՀՄԿ-ի կողմից չֆինանսավորված նախորդ կամ առկա աշխատանքների և (կամ) ՀՄԿ-ի կողմից ֆինանսավորող ծրագրի ազդեցությունը գնահատելու համար: Աուդիտը կորոշի, թե ծրագիրը որքանով է հետևում գործող կանոնակարգերին և էկոլոգիական պահանջներին, ինչպես նաև կգնահատի ծրագրի գործողություններին առնչվող շրջակա միջավայրին և մարդու առողջությանն ու ապահովությանը սպառնացող հնարավոր ռիսկերը, պարտավորությունները և հնարավորությունները:

Սույն Ուղեցույցը կարտացոլվի և կիզի Համաձայնագրում: Համաձայնագիրը կներառի նաև դրույթ, որով Համաձայնագրի գործողության ողջ ընթացքում կարգելվի ՀՄԿ-ի ֆինանսական միջոցների տրամադրումն այն ծրագրերին, որոնք կարող են զգալի վնաս հասցնել շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովությանը:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համաձայնագրի կողմ հանդիսացող երկիրը պետք է պարբերաբար հաշվետվություններ ներկայացնի ՀՄԿ-ին, որտեղ կներկայացվի, թե արդյոք Համաձայնագրի ներքո ֆինանսավորվող ծրագրերը հետևում են սույն Ուղեցույցին, Համաձայնագրում և հարակից փաստաթղթերում նկարագրվող էկոլոգիական ու

Հունվարի 20, 2006 թ.

սոցիալական ապահովության միջոցներին: Հաշվետվությունները պետք է մանրամասն տեղեկատվություն տրամադրեն փաստացի էկոլոգիական և սոցիալական ազդեցության, ինչպես նաև մեղմացման ծրագրերի (օր.՝ Շրջակա միջավայրի կառավարման ական) իրականացման կարգավիճակի մասին, ներառյալ վերջիններիս հետ կապված ծախսերը: Ուսումնասիրելով նման հաշվետվությունները՝ ՀՄԿ-ն կարող է փոփոխել ծրագրի իրականացման մասին իր ուղեցույցը:

Հավելված Ա. Սահմանումներ

Շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովության հասցվող վնասը. համարվում է, որ ծրագիրը «կարող է զգալի վնաս հասցնել շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովությանը», և, հետևաբար, չստանալ ֆինանսավորում ՀՄԿ-ից, եթե.

ա) ծրագրի արդյունքում, նույնիսկ մեղմացման միջոցառումների պատշաճ իրականացման դեպքում, առաջանում է կամ կառաջանա այնպիսի նյութ, պայման կամ հանգամանք, որը շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովությանը զգալի վնաս հասցնելու ռիսկ է պարունակում՝ տվյալ նյութի, պայմանի կամ հանգամանքի պատճառած ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական ազդեցությամբ պայմանավորված,

բ) ծրագիրը նախատեսում է կամ կնախատեսի հետևյալի արտադրություն, գնում կամ միտումնավոր բացթողում.

- կայուն օրգանական աղտոտիչներ, որոնք Միացյալ Նահանգների Շրջակա միջավայրի պահպանության գործակալության (USEPA) կողմից ճանաչվել են որպես գլոբալ հանրության ամենալուրջ խնդիրը³,
- ցանկացած թունաքիմիկատ, արդյունաբերական կամ կենցաղային քիմիական նյութ, որը, «Նախապես տեղեկացված համաձայնություն (PIC) ծրագրի» համաձայն, Միացյալ Նահանգների Շրջակա միջավայրի պահպանության գործակալության կողմից ճանաչվել է որպես «արգելված» կամ «խիստ սահմանափակ օգտագործման» նյութ⁴, կամ
- ցանկացած արտադրանք (ներառյալ բացթողումները), որի օգտագործումն արգելված կամ խստորեն կարգավորված է Միացյալ Նահանգներում՝ շրջակա միջավայրի վրա ունեցած թունավոր ազդեցության կամ մարդու առողջության համար լուրջ ռիսկ առաջացնելու պատճառով, կամ

գ) ծրագիրն այնպիսի ենթակառուցվածքային ծրագիր է, որը Միացյալ Նահանգների ֆեդերալ օրենսդրությամբ արգելված կամ խստիվ կարգավորված է՝ ռադիոակտիվ նյութերից շրջակա միջավայրը պահպանելու

³ <http://www.epa.gov/oppfead1/international/pops.htm>

⁴ <http://www.epagov/oppfead1/international/piclist.htm>

համար: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ, հաշվի առնելով Շրջակա միջավայրի վրա ազդեցության մանրակրկիտ գնահատման արդյունքները, ՀՄԿ-ն վերջնականապես որոշում է, որ նախագիծը զգալի վնաս չի հասցնի շրջակա միջավայրին, մարդու առողջությանը և ապահովությանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ).

վերլուծություն, որի միջոցով որոշվում է կոնկրետ ծրագրի էկոլոգիական և սոցիալական հնարավոր հետևանքները վերջինիս ազդեցության գոտում, դիտարկվում են ծրագրի այլընտրանքները, բացահայտվում են ծրագրի ընտրության, տեղակայման, պլանավորման, նախագծման և իրականացման եղանակների բարելավման հնարավորությունները՝ էկոլոգիական և սոցիալական բացասական հետևանքները կանխելու, նվազեցնելու, մեղմացնելու կամ փոխհատուցելու, ինչպես նաև դրական հետևանքերն էլ ավելի ամպրապնդելու նպատակով: Այն ներառում է ծրագրի իրականացման ընթացքում բացասական էկոլոգիական և սոցիալական հետևանքները մեղմացնելու և կառավարելու գործընթացը: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ծավալը և խորությունը պայմանավորված են ծրագրի հնարավոր ազդեցությամբ: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություններ» վերնագրով Հավելված Դ-ում ներկայացվող տեղեկությունները:

Շրջակա միջավայրի կառավարման պլան. Շրջակա միջավայրի կառավարման պլանը նկարագրում է ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված մեղմացման, մոնիտորինգի, ինստիտուցիոնալ միջոցառումները, որոնց նպատակը բացասական հետևանքները վերացնելը, չեզոքացնելը կամ ընդունելի մակարդակի հասցնելն է:

Հավելված Բ.

12114 Գործադիր հրամանի իրականացման ընթացակարգերը

Սույն հավելվածում ներկայացվում են այն ընթացակարգերը, որոնց կհետևի ՀՄԿ-ն՝ 1979 թ. հունվարի 4-ի թիվ 12114 Գործադիր հրամանը, թիվ 1957 Ֆեդերալ կանոնը (1979 թ. հունվարի 9) իրականացնելու համար («Գործադիր հրաման»):

1. Ներառվող գործողությունները

ՀՄԿ-ի այն պաշտոնյան, որը պատասխանատու է գործողությունների իրականացումը թույլատրելու և հաստատելու համար, հաշվի կառնի շրջակա միջավայրի վրա ազդեցության համապատասխան վերլուծությունը՝ նախքան հետևյալ գործողությունների համար թույլտվություն և հավանություն տալը.

ա) ՀՄԿ-ի այն գործողությունը, որը զգալիորեն ազդում է որևէ պետության իրավասության տակ գտնվող տարածքներից դուրս տեղակայված համընդհանուր բնական ռեսուրսների (օրինակ՝ օվկիանոսների կամ Անտարկտիկայի) շրջակա միջավայրի վրա,

բ) ՀՄԿ-ի այն գործողությունը, որը զգալիորեն ազդում է օտարերկրյա այն պետությունների վրա, որոնք չեն ընդգրկված կամ չեն մասնակցում Միացյալ Նահանգների տվյալ գործողության մեջ, կամ

գ) Միացյալ Նահանգների տարածքից դուրս ՀՄԿ-ի այն գործողությունը, որը զգալիորեն ազդում է գլոբալ նշանակություն ունեցող բնական կամ էկոլոգիական այն ռեսուրսների վրա, որոնք պահպանվում են համաձայն ԱՄՆ Նախագահի, կամ, պարտադիր կատարման ենթակա միջազգային համաձայնագրերով պահպանվող ռեսուրսների դեպքում՝ Պետական քարտուղարի որոշման:

2. Շրջակա միջավայրի ուսումնասիրության տեսակը

4-րդ բաժնի համապատասխան,

ա) Վերը 1-ին բաժնի ա) կետով նախատեսվող գործողությունների դեպքում ՀՄԿ-ն հաշվի կառնի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման արդյունքները:

բ) Վերը 1-ին բաժնի բ) կամ գ) կետերով նախատեսվող գործողությունների դեպքում ՀՄԿ-ն հաշվի կառնի շրջակա միջավայրի համապատասխան ուսումնասիրությունը, սույն Ուղեցույցի «Շրջակա միջավայրի ուսումնասիրություն» վերնագրով բաժնի չափանիշների համաձայն:

3. Պետական դեպարտամենտի համակարգումը

Վերը 1-ին և 2-րդ բաժինների իրականացման համար ՀՄԿ-ն կդիմի Պետական դեպարտամենտին՝ օտարերկրյա պետությունների հետ շրջակա միջավայրի վերաբերյալ համաձայնագրերի կամ այլ պայմանավորվածությունների մասին բոլոր հաղորդակցությունները համակարգելու նպատակով:

4. Որոշ հասկացությունների իմաստը

4-րդ բաժինը վերաբերում է բացառապես սույն Ուղեցույցի Հավելված Բ-ին: Գործադիր հրամանի և Հավելված Բ-ի կիրառման նպատակով «շրջակա միջավայր» հասկացությունը, ըստ Գործադիր հրամանում տրվող սահմանման, նշանակում է բնական և ֆիզիկական միջավայրը և չի ներառում սոցիալական, տնտեսական և այլ միջավայրերը: Գործողությունը նշանակալիորեն ազդում է միջավայրի վրա, եթե այն զգալի վնաս է հասցնում շրջակա միջավայրին, նույնիսկ եթե ակնկալվում է, որ, ի վերջո, այն նպաստավոր է լինելու տվյալ միջավայրի համար:

Հավելված Գ.

Խնդրահարույց ոլորտների և վայրերի օրինակելի ցանկ⁵

Սույն ցանկը ներկայացնում է այն ծրագրերի օրինակները, որոնք, իրենց տեսակով, տեղակայման վայրով, պրոբլեմատիկությամբ և մասշտաբով պայմանավորված, կարող են ունենալ զգալի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Ցանկում ներառված ծրագրերի տեսակները ծառայում են լոկ որպես օրինակներ, և ցանկը սպառնիչ չէ:

- Նավթի վերամշակման գործարաններ (բացառությամբ այն ձեռնարկությունների, որոնք չմշակված նավթից ստանում են միայն տեխնիկական յուղեր) և օրական 500 տոննա կամ ավելի ածուխը կամ բիտումը գազ կամ հեղուկ դարձնելու համար օգտագործվող սարքավորումները,
- Ջերմաէլեկտրակայաններ և 300 կամ ավելի մեգավատ հզորությամբ աշխատող ջերմային այլ կառույցներ, ատոմային կայաններ և ատոմային այլ ռեակտորներ, ներառյալ տվյալ կայանների կամ ռեակտորների ապամոնտաժումը կամ կոնսերվացումը (բացառությամբ հետազոտական սարքավորումների՝ նախատեսված տրոհվող ատոմային հումքի արտադրության և փոխարկման համար, որոնց առավելագույն հզորությունը չի գերազանցում 1 կիլովատ ջերմային բեռնվածությունը):
- Ատոմային վառելիքի արտադրության և հարստացման, ռադիոակտիվ ատոմային վառելիքի վերամշակման, պահպանման կամ վերացման, կամ ռադիոակտիվ թափոնների պահպանման, վերացման կամ մշակման համար նախատեսվող սարքավորումներ:
- Չուզուհի և պողպատի սկզբնական ձուլման աշխատանքներ, մետալուրգիական, քիմիական կամ էլեկտրալիտիկ եղանակով հանքանյութից, խտանյութից կամ երկրորդային հումքից չմշակված գունավոր մետաղների ստացման համար նախատեսված սարքավորումներ:
- Ասբեստի արդյունահանման, մշակման և վերափոխման ձեռնարկություններ, ասբեստ պարունակող ապրանքներ. ասբեստ ու ցեմենտ պարունակող ապրանքների դեպքում ավելի քան 20,000 տոննա պատրաստի արտադրանք, ջերմապաշտպանիչ նյութերի դեպքում ավելի քան 50 տոննա պատրաստի արտադրանք, և տարեկան ավելի քան 200 տոննա այլ արտադրանք, որ պարունակում է ասբեստ:
- Քիմիական կոմբինատներ, որոնք քիմիական փոխակերպման միջոցով արդյունաբերական ծավալներով արտադրում են նյութեր, ունեն մի քանի փոխկապակցված արտադրամաս՝ նախատեսված հետևյալի թողարկման

⁵ Աղբյուրը՝ EBRD-ի շրջակա միջավայրի քաղաքականությունը (<http://www.ebrd.org/about/policies/enviro/policy/policy.pdf>), որը նաև կհարթվում է Տնտեսական համագործակցության և զարգացման (OECD) «Ընդհանուր մոտեցումներ»-ում:

համար. հիմնական օրգանական քիմիական նյութեր, հիմնական անօրգանական քիմիական նյութեր, ֆոսֆորական, ազոտական, կամ կալիումական պարարտանյութեր (պարզ կամ բաղադրյալ), բույսերի պաշտպանության հիմնական նյութեր և բիոցիդներ, քիմիական կամ կենսաբանական եղանակով ստացվող հիմնական դեղագործական ապրանքներ, պայթուցիկ նյութեր:

- Ավտոմայրուղիների, հեռագնա երկաթուղային տրանսպորտի և 2,100 մետր և ավելի հեռավորությամբ հիմնական թռիչքային ուղի ունեցող օդակայանների համար ձեպլնթաց ուղիների կառուցում, կամ առկա ճանապարհների վերակառուցում և/կամ ընդլայնում՝ չորս կամ ավելի երկրորդային ճանապարհների համար, եթե ճանապարհի վերակառուցված և/կամ ընդլայնված հատվածն ունի 10 կմ կամ ավելի երկարություն:
- Խողովակաշարեր, կայաններ և հարակից սարքավորումներ՝ մեծ ծավալներով գազ, նավթ և քիմիական նյութեր փոխադրելու համար:
- Ծովային նավահանգիստներ և գետային տրանսպորտային ուղիներ և նավահանգիստներ գետային երթևեկության համար, որոնք անցանելի են ավելի քան 1,350 տոննայանոց նավերի համար, առևտրային նավահանգիստներ, ցամաքին և արտաքին նավահանգիստներին միացված բեռնման և բեռնաթափման մատույցները (բացառությամբ լաստանավերի մատույցների), որոնք անցանելի են ավելի քան 1,350 տոննայանոց նավերի համար:
- Վնասաբեր, թունավոր կամ վտանգավոր թափոնների այրման, քիմիական մշակման կամ թաղման համար նախատեսված սարքավորումներ:
- Խոշոր պատվարներ⁶ և այլ կառույցներ՝ նախատեսված ջրի հոսքի դադարեցման կամ ջրի պահպանման համար:
- Ստորգետնյա ջրերի արդյունահանման ծրագրեր կամ ստորգետնյա ջրերի ներհոսքի արհեստական ավելացման աշխատանքներ այն դեպքում, երբ արդյունահանվող կամ ներհոսող ստորգետնյա ջրերի տարեկան ծավալը 10 միլիոն կամ ավելի խորանարդ մետր է:
- Արդյունաբերական ձեռնարկություններ՝ նախատեսված (ա) փայտանյութից կամ մանրաթելային համանման նյութերից փափուկ զանգվածի, (բ) թղթի և փայտե տախտակների արտադրության համար, եթե արտադրական օրական հզորությունը ավելի քան 200 տոննա չորացված արտադրանք է:
- Տորֆի արդյունահանում, քարհանքեր և վերգետնյա հանքաարդյունահանում, մետաղի հումքի կամ ածխի մշակում:
- Բենզինի, նավթաքիմիական կամ քիմիական նյութերի պահպանման կառույցներ, որոնք ունեն ավելի քան 200,000 տոննա և ավելի տարողություն:

⁶ Խոշոր պատվարներն ունեն 15 մետր և ավելի բարձրություն, կամ 5 մետրից մինչև 15 մետր բարձրություն և ավելի քան երեք միլիոն խորանարդ մետր տարողությամբ ջրամբար (սահմանումն օգտագործվում է Խոշոր պատվարների միջազգային հանձնաժողովի կողմից (ICOLD)):

- Մեծածավալ մթերում:
- Կեղտաջրերի մաքրման մունիցիպալ կայաններ՝ ավելի քան 150,000 բնակչի հաշվով:
- Աղբամշակման և աղբահանման մունիցիպալ ձեռնարկություններ:
- Լայնածավալ զբոսաշրջություն և մանրածախ առևտրի զարգացում:
- Էլեկտրական հոսանքի վերգետնյա լարերի տեղադրում:
- Հողի լայնածավալ մելիորացիա:
- Լայնածավալ առաջնային հողագործություն և անտառատնկում, որը ենթադրում է բնական միջավայրի ինտենսիֆիկացում կամ փոփոխում:
- Մորթու և կաշվի մշակման գործարաներ, որոնք օրական տալիս են ավելի քան 12 տոննա պատրաստի արտադրանք:
- Թռչնաբուծական և խոզաբուծական ֆաբրիկաներ, որոնցում պահվում է 40,000 թռչուն, 2,000 բուծվող խոզ (30 կգ-ից ավելի քաշով), կամ 750 մայր խոզ:
- Ծրագրեր, որոնց իրականացումը նախատեսվում է խնդրահարույց վայրերում կամ որոնք կարող են ունենալ զգալի ազդեցություն տվյալ վայրերի վրա, նույնիսկ եթե ծրագրի կարգը ներառված չի վերոնշյալ ցանկում: Նշված խնդրահարույց վայրերը ներառում են ազգային պարկերը և ազգային կամ միջազգային իրավունքով սահմանված այլ պահպանվող տարածքները, միջազգային, ազգային կամ տարածաշրջանային նշանակության խոցելի այլ տարածքները, ինչպիսիք են գերխոնավ տարածքները, հարուստ կենսաբազմազանություն ունեցող անտառները, հնէաբանական կամ մշակութային նշանակության տարածքները, տեղաբնիկների կամ խոցելի այլ խմբերի կողմից կարևորվող տարածքները:

Հավելված Դ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունները⁷

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պետք է կատարվի ծրագրի հնարավոր ազդեցությանը համամասնորեն: Շրջակա միջավայրի վրա ազդեցության հաշվետվությունը պետք է ներառի հետևյալը (ընդ որում բերված հաջորդականությունը պարտադիր չէ).

- ✓ **Գործադիր ամփոփում:** Այս բաժնում համառոտ կերպով ներկայացվում են գործողությունների արդյունքում բացահայտված նշանակալի փաստերը և առաջարկվող գործողությունները:
- ✓ **Շրջանակների որոշում:** Ներկայացվում են նշանակալի ազդեցություն կրող խնդիրները և հետևանքները, սահմանվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման առաջադրանքի պայմանները:
- ✓ **Քաղաքականության, իրավական և վարչական շրջանակները:** Քննարկվում է քաղաքականության, իրավական և վարչական շրջանակները, որոնց ներքո կատարվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը:
- ✓ **Ծրագրի նկարագրություն:** Տալիս է առաջարկվող ծրագրի և վերջինիս աշխարհագրական, էկոլոգիական, սոցիալական և ժամանակային բովանդակության նկարագիրը, ներառյալ պահանջվող արտաքին ներդրումները (օր.՝ նպատակային խողովակաշարեր, մոտեցնող ճանապարհներ, էլեկտրակայաններ, ջրամատակարարում, բնակելի շենքերի շինարարություն, հումքի և արտադրանքի պահեստավորման կառույցներ), բացահայտում է վերաբնակեցման կամ սոցիալական զարգացման պլանի անհրաժեշտության հարցը, և սովորաբար ներկայացնում է ծրագրի իրականացման տեղանքը և ազդեցության շրջանակներն արտացոլող քարտեզը:
- ✓ **Ելակետային տվյալներ:** Կատարում է հետազոտության տարածքի բազմակրոմանի գնահատում և նկարագրում է ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական պայմանները, այդ թվում մինչ ծրագրի սկիզբն ակնկալվող փոփոխությունները: Բացի այդ, այստեղ հաշվի են առնվում այն գործող և առաջարկվող զարգացման ծրագրերը, որոնք առնչվում են, սակայն ուղղակիորեն կապված չեն տվյալ ծրագրին: Տվյալները պետք է վերաբերեն ծրագրի տեղակայման վայրի, նախագծի, գործունեության կամ մեղմացման

⁷ Հավելվածը հիմնվում է Համաշխարհային բանկի «Գործառնական ձեռնարկի» (4.01) վրա:

միջոցառումների մասին որոշումներին: Այս բաժինն արտացոլում է տվյալների հավաստիությունը, հուսալիությունը և աղբյուրները:

- ✓ **Էկոլոգիական և սոցիալական ազդեցություն:** Կանխատեսում և գնահատում է շրջակա բնական միջավայրի և տվյալ միջավայրին առնչվող բնկաչության վրա ծրագրի հնարավոր դրական և բացասական ազդեցությունը: Այն հնարավորինս քանակական տեսանկյունից անդրադառնում է մշակութային սեփականության, տեղաբնիկների և ոչ կամավոր վերաբնակեցման, ինչպես նաև մարդու առողջության և ապահովության վրա հետևանքներին: Այստեղ կարող է նշվել նաև ծրագրին առնչվող կամ դրանից բխող զգալի անուղղակի և գումարային ազդեցությունը և իրատեսորեն կանխատեսելի հետևանքները, ինչպես նաև այն բացասական հետևանքները, որոնք անհնար է մեղմացնել: Տվյալ բաժնում հետազոտվում են շրջակա միջավայրի վիճակի բարելավման հնարավորությունները, որոշվում և գնահատվում է առկա տվյալների ծավալը և որակը, տվյալների հետ կապված հիմնական բացերը, կանխատեսումների հետ կապված անորոշությունները և մասնավորեցվում են խնդիրները, որոնք հետագա ուսումնասիրություն չեն պահանջում:
- ✓ **Այլընտրանքների վերլուծություն:** Պարբերաբար համեմատում է ծրագրի իրատեսական այլընտրանքները՝ ծրագրի առաջարկվող վայրի, տեխնոլոգիայի, նախագծի և իրականացման առումով (ներառյալ «առանց նախագծի» տարբերակը)՝ հաշվի առնելով դրանց հնարավոր էկոլոգիական և սոցիալական ազդեցությունը: Ուսումնասիրում է նաև վերոհիշյալ ազդեցությունների մեղմացման նպատակահարմարությունը, դրանց հետ կապված կապիտալ և ընթացիկ ծախսերը, տեղական պայմաններում դրանց կիրառելիությունը, ինչպես նաև դրանց կառուցվածքային, ուսուցման և մոնիտորինգի անհրաժեշտությունը: Այստեղ հնարավորին չափով քանակապես որոշվում է յուրաքանչյուր այլընտրանքային տարբերակի էկոլոգիական և սոցիալական ազդեցությունը, գնահատվում են տնտեսական արժեքները: Սահմանում է առաջարկվող ծրագրի նախագծի ընտրության հիմքերը, հիմնավորում է արտանետումների առաջարկվող մակարդակը և շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և վերացման մոտեցումները:
- ✓ **Շրջակա միջավայրի կառավարման պլան:** Նկարագրում է ծրագրի իրականացման ընթացքում իրականացվելիք մեղմացման, մոնիտորինգի, կառուցվածքային միջոցառումները, որոնց նպատակն է վերացնել, չեղոքացնել բացասական ազդեցությունը կամ հասցնել այն ընդունելի մակարդակի:

- ✓ **Քննարկումներ:** Թվարկում և նկարագրում է այն քննարկումները, որոնք իրականացվել են ծրագրի ազդակիր մարդկանց խմբերի, տեղական հասարակական կազմակերպությունների և կանոնակարգող մարմինների հետ՝ վերջիններիս կարծիքներին ծանոթանալու նպատակով: Ծրագրի մակարդակով իրականացվող քննարկումները պետք է սկսվեն աշխատանքների շրջանակների որոշման պահից և շարունակվեն ծրագրի իրականացման ողջ ընթացքում: